

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 28(2)

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի ընդարձակ նիստի

ք. Երևան

29 հունիսի 2009 թվականի

Նախագահում էր՝

- S. Սարգսյան - Հայաստանի Հանրապետության վարչապետ, Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նախագահ
- Մասնակցում էին՝
- Վ. Մարության - ՀՀ Տրանսպորտի և կապի նախարարի տեղակալ
- Ս. Պետրոսյան - ՀՀ Սփյուռքի նախարարի տեղակալ
- Ռ. Հարությունյան - «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ, գլխավոր տնօրեն
- Ա. Գրիգորյան - «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման հարցերով քարտուղարության պետ, խորհրդի քարտուղար
- Յ. Շուքրյան - ՀՀ ԳԱԱ փոխնախագահ, ակադեմիկոս
- Գ. Չուգասզյան - «Տեղեկատվական տեխնոլոգիաների հիմնադրամ» հասարակական կազմակերպության նախագահ
- Ա. Ալեքսանյան - «Արմինկո» ՍՊԸ համատեղ ձեռնարկության տնօրեն
- Ա. Տոնոյան - «Վեբ» ՍՊԸ-ի նախագահ
- Մ. Մարկոսյան - «Երևանի կապի միջոցների ԳՀԻ» ՓԲԸ-ի խորհրդի նախագահ
- Կ. Վարդանյան - «Տեղեկատվական տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» հասարակական կազմակերպության տնօրեն
- Գ. Կարապետյան - «Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» ՍՊԸ-ի նախագահ
- Գ. Էվոյան - «Հայլինք» ՍՊԸ-ի տնօրեն
- Ա. Մխիթարյան - «Տեղեկատվական տեխնոլոգիաների ուսուցում» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն
- Բ. Ենգիբարյան - «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի տնօրեն
- Է. Մանուկյան - «ԻՍՄԱ» ՍՊԸ-ի տնօրեն

Ա. Բաղդրյան	- «Յունիքումփ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն
Հ. Խանջյան	- «Բի Լայն» ՍՊԸ-ի նախագահ
Հ. Մուսայելյան	«Մինոփսիս Արմենիա» ընկերության գլխավոր տնօրեն
Հ. Ավոյան	- «Սոբսիո» ՓԲԸ-ի տնօրեն
Լ. Մինասյան	- Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի գործադիր տնօրեն
Հ. Չոբանյան	- «Նորք» տեղեկատվա-վերլուծական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն
Ս. Մեհրաբյան	- «Մակադամիան ԱՌ» ՓԲԸ-ի տնօրեն
Գ. Բարսեղյան	- «Մայքրոտֆթ» ընկերության հայաստանյան ներկայացուցչության տնօրեն
Գ. Պարոնյան	- «Եռաչափ մոդելավորողների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության նախագահ
Հ. Վարդանյան	- «Էյ Փի Ջի Լեբս ԱՄԱԲ» ՍՊԸ ՀՄ-ի տնօրեն
Ռ. Վարդանյան	- «Քվանտ» վարժարանի տնօրեն
Հրավիրվածներ`	
Դ. Սարգսյան	- ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
Ն. Երիցյան	- ՀՀ Էկոնոմիկայի նախարար
Ա. Աշոտյան	- ՀՀ կրթության և գիտության նախարար
Հ. Սահակյան	- ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետի տեղակալ
Գ. Առաքելյան	- ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության գլխավոր մասնագետ
Ա. Քուչուկյան	- «Երևանի մաթեմատիկական մեքենաների ԳՀԻ» ՓԲԸ-ի գլխավոր ինժեներ
Ա. Մանուկյան	- «Մեսիս» ՍՊԸ-ի տնօրեն
Ա. Գրիգորյան	- ՀՀ Էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի տեղեկատվական հասարակության ձևավորման և Էլեկտրոնային կառավարման վարչության պետ
Մ. Մելիքյան	- «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի Հասարակայնության հետ կապերի մասնագետ
Ա. Ղազարյան	- CAPS ծրագրի տնօրեն

- Ա. Աբրահամյան - CAPS ծրագրի SS կլաստերի համակարգող
- Լ. Եզանյան - ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ
- Մ. Քուշքյան - ՀՀ կառավարության աշխատակազմի արձանագրային բաժնի փորձագետ
- Ն. Նիկողոսյան - ՀՀ Էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի բարձր և տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության առաջատար մասնագետ
- Ա. Սարգսյան - «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի քարտուղարության առաջատար մասնագետ
- Լ. Եղիազարյան - «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի քարտուղարության առաջատար մասնագետ
- Ա. Հայրիյան - «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի քարտուղարության առաջատար մասնագետ

#### Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նախորդ նիստի հանձնարարականների կատարման ընթացքի մասին

ՏՏԶԱ Խորհրդի գործադիր քարտուղար Ա. Գրիգորյան  
 ՀՀ Էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյան  
 ՀՀ կրթության և գիտության նախարարի Ա. Աշոտյան  
 Ներդրումների և բիզնես հնարավորությունների ԱԽ-ի ղեկավար Բ. Ենգիբարյան  
 Գիտակրթական ԱԽ-ի ղեկավար Գ. Չուքասզյան  
 Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության տնօրեն Կ. Վարդանյան

2. Հեռահաղորդակցության հիմնախնդիրների մասին

«Սոբսիո» ՓԲԸ-ի տնօրեն Հ. Ավոյան  
 Էլեկտրոնային կառավարման ԱԽ-ի ղեկավար Հ. Չոբանյան  
 Ներդրումների և բիզնես հնարավորությունների ԱԽ-ի ղեկավար Բ. Ենգիբարյան  
 «Յունիքոմփ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն Ա. Բալդրյան  
 ՀՀ Էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյան

3. Այլ հարցեր

1. Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նախորդ  
նիստի հանձնարարականների կատարման ընթացքի մասին

-----

(Տ. Սարգսյան, Դ. Սարգսյան, Ն. Երիցյան, Ա. Աշոտյան, Է. Մանուկյան, Բ. Ենգիբարյան, Հ. Մուսայելյան, Կ. Վարդանյան, Հ. Ավոյան, Ա. Քուչուկյան, Վ. Մարության, Յ. Շուքուրյան, Հ. Խանջյան, Ռ. Վարդանյան, Գ. Բարսեղյան, Լ. Մինասյան, Գ. Չուգասզյան, Ա. Բաղդրյան, Ա. Գրիգորյան)

1. **ա.** Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի քարտուղար Ա. Գրիգորյանը տեղեկացրեց, որ համաձայն ՏՏԶԱ Խորհրդում արված առաջարկությունների Հայաստանի Հանրապետության Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը 13 մայիսի 2009 թվականի N 211Ն որոշմամբ «Ռադիոկաճախականությունների օգտագործման կարգի» մեջ իրականացվել է փոփոխություններ:
 

**բ.** Ընդունվեց ի գիտություն Հայաստանի Հանրապետության Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 13 մայիսի 2009 թվականի N 211Ն որոշումը:
2. **ա.** ՀՀ Էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանը հայերեն-անգլերեն երկկողմանի թարգմանչական ծրագրին ֆինանսական աջակցություն ցուցաբերելու նպատակով իրականացված միջոցառումների մասին ներկայացրեց տեղեկատվություն, մասնավորապես, տեղեկացրեց, որ կառավարության որոշման նախագիծ էր դրվել շրջանառության մեջ, որտեղ նախատեսվում էր որոշակի գումար , որը պետք է տրամադրվի ծառայություն մատուցելու դիմաց: Այդ որոշումը քննարկվեց նախարարների կոմիտեում և հիմնական եզրահանգումը այն էր, որ ծրագրի տևողականությունը հիմնավորված չէ և հետաքրքրությունը ծրագրի նկատմամբ մասնավոր հատվածի կողմից հստակ չէ: Այդ պատճառաբանություններով առաջարկը հանվեց քննարկումից:
 

**բ.** Տեղի ունեցավ մտքերի փոխանակում:

**գ.** ՀՀ Վարչապետ, Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նախագահ Տ. Սարգսյանը հիշեցրեց, որ մասնավոր ընկերությունների

կողմից ծրագրի աջակցության համար ոչ մի առաջարկություն չի ներկայացվել, և մասնավոր ընկերությունները նպատակահարմար չեն գտնում պետական միջոցները տրամադրել ծրագրի աջակցության համար:

3. **ա.** ՀՀ Էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանը տեղեկացրեց, որ ապրանքների ծագման սերտիֆիկատի տրաման գործընթացը հեշտացնելու համար օրենսդրական դաշտը կարգավորված է, բայց կիրառկման մասով խնդիրներ կան:

**բ.** ՀՀ Վարչապետ, Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նախագահ Տ. Սարգսյանը հանձնարարեց ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահին, պատրաստել ներքին կարգադրություն, որ այսուհետ ՀՀ օրենքով չնախատեսված ապրանքների համար մաքսակետերում սերտիֆիկատ չպահանջվի:

4. **ա.** ՀՀ Էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանը տեղեկացրեց, որ նորաստեղծ ընկերությունների գործընթացը հեշտացնելու համար ՀՀ-ում այսօր հնարավոր է «Մի կանգառի կենտրոն» սկզբունքով բիզնես ընկերություն գրանցել, մինչև տարվա վերջ կավարտվի նաև բիզնես գրանցել մեկ պատուհանի դիզայնը:

**բ.** Տեղի ունեցավ մտքերի փոխանակում: Մասնավորապես, շեշտվեց, որ այսպես կոչված «Startup» ընկերություններ կազմակերպան համար բավարար չէ միայն բիզնեսի գրանցման խնդիրների հեշտացումը, անհրաժեշտ է իրականացնել բիզնես առաջարկների աջակցության ապահովում:

**գ.** ՀՀ Վարչապետ, Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նախագահ Տ. Սարգսյանը հանձնարարեց` ՀՀ Էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանի գլխավորությամբ ստեղծել աշխատանքային խումբ «Startup» ընկերություններ աջակցության համար առաջարկներ հավաքագրելու և ՏՏՁԱ Խորհրդին ներկայացնելու նպատակով:

5. **ա.** ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար պրն. Դ. Սարգսյանին տեղեկացրեց, որ համաձայն ՏՏՁԱ Խորհրդի հանձնարարականի ստեղծվել է միջգերատեսչական հանձնաժողով` ՀՀ-ում ՏՏ մենեջերների մրցույթներ կազմակերպելու համար:

**բ.** Միջգերատեսչական հանձնաժողովի նախագահ Հ. Մուսաեյանը տեղեկացրեց, որ հանձնաժողովը արդեն հավաքվել է, որ քննարկումներ են գնում, որպեսզի ավելի մանրամասն տեղեկատվություն պատրաստեն առաջիկա նիստերին ներկայացնելու համար:

6. **ա.** «Էլեկտրոնային բովանդակության» միության (ԷԼԲՄ) նախագահ, Խորհրդի

Գիտակրթական աշխատանքային խմբի ղեկավար Գ. Չուգասյանը տեղեկացրեց, որ համաձայն ՀՀ Վարչապետի հանձնարարականի ԷԼԲԱ-ի անդամները ձեռնամուխ եղան «Էլեկտրոնային բովանդակության հայեցակարգի» ստեղծման գործին և հայեցակարգի առաջին տարբերակը ներկայացվել է դեռ ապրիլ ամսին, որից հետո հուլիս ամսին «Էլեկտրոնային բովանդակության հայեցակարգի» դրույթները ներկայացվել են ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունում: Պրն. Չուգասյանը գտնում է, որ անհրաժեշտություն կա կորդինացնել Էլեկտրոնային բովանդակության հիմնահարցերին վերբերող բոլոր գործողությունները և խնդրեց վերահաստատել հանձնարարականը ԷԼԲԱ-ին, մինչև այս տարվա վերջ շարունակել ստեղծել «Էլեկտրոնային բովանդակության հայեցակարգը»:

**բ.** ՀՀ Էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանը առաջարկեց, որպեսզի հայեցակարգը ներկայացվի կոնկրետ ծրագրերի տեսքով, հաշվարկված ծախսերը և ընդանուր առմամբ թե այդ ծրագրերը ինչ արժեք են ստեղծելու հանրապետությունում:

**գ.** ՀՀ Վարչապետ, Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նախագահ Տ. Մարգարյանը հանձնարարեց՝ ՀՀ Էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանին հաստատել նախարարության հաստատակամությունը համագործակցելու ԷԼԲԱ-ի հետ «Էլեկտրոնային բովանդակության հայեցակարգի» ստեղծման գործում:

7. **ա.** ՀՀ Էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանը ներկայացրեց «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ կետի վերաբերյալ իրենց կողմից արված աշխատանքների մասին տեղեկատվություն:

**բ.** ՀՀ Տրանսպորտի և կապի նախարարի տեղակալ պրն. Մարությանը տեղեկացրեց, որ «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ կետի վերաբերյալ իրենք արդեն նախնական քնարկումներ անցկացրել են ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահի հետ և պատրաստ են առաջիկա ՏՏԶԱ Խորհրդի նիստում ներկայացնել խնդրի լուծման վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն:

8. **ա.** Ռազմավարական աշխատանքային խմբի ղեկավար պրն. Քուչուկյանը տեղեկացրեց, որ Էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման աշխատանքների կազմակերպման գործընթացներին ինքը բազմիցս հրավիրվել է և այսօր կարևորում է խոսել ծրագրի առաջնահերթությունների կատարման ընթացքի մասին,

**բ.** ՀՀ Վարչապետ, Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող

խորհրդի նախագահ Տ.Սարգսյանը հանձնարարեց՝ ՏՏՁԱ Խորհրդի Ռազմավարական աշխատանքային խմբի ղեկավար պրն. Քուչուկյանին հանգամանալից ուսումնասիրել և ՏՏՁԱ Խորհրդի առաջիկա նիստում ներկայացնել առաջնահերթությունների ծրագրի կատարման ընթացքի մասին տեղեկատվություն:

9. **ա.** «Տեղեկատվական տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» հասարակական կազմակերպության տնօրեն Կ. Վարդանյանը ներկայացրեց Միության կողմից կազմված և Պետական Եկամուտների կոմիտե ներկայացված մաքսային բարեփոխումների փաթեթի շուրջ ՊետԵկամուտների կոմիտեի հետ համագործակցության մասին նախնական պայմանավորվածությունը

**բ.** Տեղի ունեցավ մտքերի փոխանակում:

- գ.** ՀՀ Վարչապետ, Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նախագահ Տ. Սարգսյանը առաջարկեց՝

1. դրական գնահատականի արժանեցնել համագործակցությունը մասնավոր ընկերությունները ներկայացնող միության և ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջև,

2. առաջարկվեց, որ այս համագործակցությունը լինի շարունակական, որպեսզի մասնավոր հատվածի գործողությունների տրամաբանությունը հասկանալի լինի մաքսային մարմիններին և, որ մաքսային մարմինների մտավախությունները էլ հասկանալի լինեն մասնավոր հատվածի համար:

3. Անհրաժեշտ է ձևավորել գործարար սովորույթ՝ փորձելով կոնկրետ դեպքերը նախադեպային դարձնել և քննարկել մաքսայինի հետ և համաձայնության գալուց հետո փորձել այդ դեպքերը կիրառել նմանատիպ իրավիճակներում:

- դ.** ՀՀ Վարչապետ, Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նախագահ Տ. Սարգսյանը հանձնարարեց ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահին ՏՏ համայնքի մաքսային գործառույթների մեջ անհանգստացնող խնդիրները քննարկելու և առաջարկություններ ներկայացնելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ՝ ՏՏ համայնքի և մաքսային կոմիտեի ներկայացուցիչների մասնակցությամբ:

10. ՀՀ կրթության և գիտության նախարար Ա. Աշոտյանը ներկայացրեց «Կրթության մասին» օրենքի 4 գլխի հոդված 21-ի, 2-ի 8-րդ կետի՝ *«սովյա, հեռակա, հեռավոր (դիստանցիոն) և դրսեկության (էքստերնատի) ձևերով ուսուցման կարգերի»* հաստատման մասին տեղեկատվություն: Մասնավորապես տեղեկացրեց, որ մինչև սեպտեմբերի 15-ը կարգերի ստեղծման որոշման նախագծերը պատրաստ կլինեն և

ընթացակարգով կներկայացվեն համապատասխան պետական կառավարման մարմիններին: Ակնկալելով կարգերը կիրառել 2010 թվականի հունվարին՝ հույս հայտնեց, որ Հայաստանի Հանրապետությունը 2010 թվականի սեպտեմբերից կունենա զարգացած հեռուստուցման ինստիտուտ:

11. **ա.** Ներդրումների և բիզնես հնարավորությունների ԱԽ-ի ղեկավար Բ. Ենգիբարյանը ներկայացրեց տեղեկատվություն «Համակարգիչ բոլորի համար» ծրագրի մասին: Մասնավորապես, նշեց, որ ստեղծվել է մոդել, որը ինքնաձախսաձածկող է, ընդհանուր շրջանառությունը երեք տարվա ընթացքում յոթ միլիոն ամերիկյան դոլար է և, որ ծրագիրը իրականացնելու համար ստեղծվում է հիմնադրամ: Համակարգիչները կարժենան հինգ հարյուր ամերիկյան դոլարին համարժեք դրամ, կլինի ապառիկ գնելու հնարավորություն՝ ամսական տասից-քսան ամերիկյան դոլարին համարժեք դրամ վճարելու պայմանով: Պիլոտային ծրագիրը կսկսվի մեկ ամսից, կտեղադրվեն հինգ հարյուր համակարգիչներ: Փորձական ծրագիրը նախատեսվում է անել Երևանում, Գյումրիում, Վանաձորում: Ծրագիրը ոչ միայն կնպաստի համակարգիչ օգտագործողների թվին, այլև Էլ-գրագիտության մակարդակի բարձրացմանը:

**բ.** Տեղի ունեցավ մտքերի փոխանակում:

- գ.** Ծրագիրը հավանության արժանացավ Խորհրդի կողմից, և ՀՀ վարչապետը նշեց, որ հատուկ ուշադրություն է պետք դարձնել հասարակական իրազեկման աշխատանքներին:

12. **ա.** ՀՀ կրթության և գիտության նախարար Ա. Աշոտյանը ներկայացրեց բոլոր դպրոցներում անխտիր համակարգչային գրագիտություն ստանալու ծրագրի իրականացման մասին տեղեկատվություն:

**բ.** Տեղի ունեցավ մտքերի փոխանակում:

- գ.** ՀՀ Վարչապետ, Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նախագահ Տ. Սարգսյանը հանձնարարեց ՀՀ կրթության և գիտության նախարար Ա. Աշոտյանին մեկ շաբաթվա ընթացքում ՀՀ կառավարությանը ներկայացնել որոշման նախագիծ «ՀՀ համակարգչային գրագիտության բարձրացման մասին»:

13. ՀՀ Էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանը տեղեկացրեց, որ կազմակերպել է քննարկումներ «Ցանցային պատրաստվածության ցուցանիշների» վերաբերյալ:

14. Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի քարտուղար Ա. Գրիգորյանը տեղեկացրեց, որ համաձայն ՀՀ Վարչապետի հանձնարարականի իր

կողմից ՀՀ վարչապետի նամակ է ուղարկվել Օբսֆորդի համալսարանի հիմնադրամի ղեկավարին ՀՀ մասնագետներին տեղեր հասկացնելու համար, ստացվել է պատասխան նամակ, որում առաջարկվել է ուսումնասիրել իրենց վեր կայքը և ներկայացնել առաջարկներ: Բանակցությունները կշարունակվեն և առաջիկա նիստերում կտեղեկացնենք գործընթացի վերաբերյալ:

15. Տեղի ունեցավ մտքերի փոխանակում, այլ հարցերի շուրջ, արվեցին առաջարկություններ: Մասնավորապես՝

ա. Բի-Լայն ընկերության նախագահ, Մշակույթի և լեզվի աշխատանքային խմբի ղեկավար պրն. Հ. Խանջանը տեղեկացրեց, որ Մշակույթի և լեզվի աշխատանքային խմբում քննարկվել և հավանության է արժանացել Microsoft Windows 7 և Office 14 ծրագրային փաթեթների հայերենացման ծրագրին աջակցելու համար Էկսպերտային խումբ ձևավորելու առաջարկ և խնդրում է խորհրդին հավանության արժանեցնել աշխատանքային խմբի առաջարկը:

բ. խորհուրդը հաստատեց Մշակույթի և լեզվի աշխատանքային խմբի Էկսպերտային խումբ ձևավորելու առաջարկը:

16. Որոշվեց հաջարդ նիստը նշանակել ս.թ-ի սեպտեմբերի 18-ին, օրակարգում ընդգրկել՝

1. Հեռահաղորդակցության հիմնախնդիրների մասին հարցը
2. SS ամիս խորագրով միջոցառումների կազմակերպման հարցը
3. Գիտակրթական հիմնախնդիրների հարցը

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ

ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ԱԶԱԿՑՈՂ ԽՈՐՀՐԴԻ

ՆԱԽԱԳԱՀ,

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ **Մ Տ Ո Ր Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն** Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ **Մ Տ Ո Ր Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն** Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ